

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54<sup>րդ</sup> ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 27

3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հակախօսական մրցումը. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Երգ գիներմպելեաց (Բանաստեղծութիւն Լոնկ-  
Ֆելլոյի) Գրաբար քարզմ. ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ. — Տէր Թաթիկ (Գիւղական կեանք) Ա.  
ՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ. — Բժեկական Քրոնիկ. ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀԱԷՐՏԻ ՈՐԴԻ. — Լացող աչեք  
(Սիրերգ) Մ. Ֆ. ԷՊԼԻԴԱԹԵԱՆ. — Միջազգային քրոնիկ. «Միլիոններու տուրջը» : — Օրուման  
Նօթեր :

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրինքն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո.  
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի : Արտասահման 12 Ֆրանկ կամ  
5 բուլլի : Թղթաստրական ծախքը եմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-  
թիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ  
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու :  
Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-  
մաններով :

Ձեռն-Քէ կը ծախուին ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ  
Հասցէ

01-1

در علیہ دہ غلطہ دہ (ماسیس) غرضی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

# Ծարձակական Քէյ

Քէյը, որ այսօր գրեթէ բոլոր մազ-  
վերդաց գլխուսը ըմպելին դարձած է,  
ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ,  
որդարեւ գործածողներուն համար բաւա-  
կան դժուար է լու ընտրութիւն մը ընել:  
Այդ տեսակներէն մասնք նշանուսը են  
իրը տխրութեամբ եւ քաղցրաբայր, մասնք  
ու թէեւ նոյնքան տխրութիւն համառ հո-  
շունքին, գերազանց են սակայն իրը կաշ-  
դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրա-  
քանիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն  
ունին որոնք շինքը կը զանազանեն ու-  
րիչ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ  
այդ յատկութեանց մէկնէն  
կորեւորները կը միացնէ իր  
վրայ, այսինքն՝ գոյն, համ-  
պատեմ եւ մանուշակ կաշ-  
դուրիչ եւ զօրացուցիչ տն-  
դուրեղեղան զգալիութիւն  
մը, եւ այդ թէյն է ճաքո-  
ցի քէյը, որ այդ յատկու-  
թեանց շնորհիւ կը յարմարի մէկն տարի-  
քի ու կազմութեան, մէկն կլիմայի եւ  
կազմակերպ եւ մէկն ճաշակի:

Յամլրոնեան եւ Խազուլեան քէյի մեծ  
վաճառատունը, իր բազմաթիւ յաճախոր-  
դաց ծառայութիւն մը մասուցանելու հա-  
մար, այս ա՛յդամ մեծաքանակ ներածած  
է հաճախած զուտ թէյ մասնուսը եւ  
դուրեղեղան աւփերով ու կը հրա՛խրէ օգ-  
տուիլ այս առիթէն բոլոր մենք, որ կը  
քափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ  
կազդուրիչ:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ հնդկա-  
ն, չինական, Սէյլէն եւ ճօվայի մահ-  
ուլու տեսակ թէյեր:

4 - 10

Ուսադուրիւն մարգայի

## ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւ-  
տաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ  
որ 15 տարուան գործունէութեամբը մեծ  
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յար-  
գոյ յաճախողներուն թէ բնականոր  
փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18.  
Բաց ի վերջիշեալ իւր մասնագիտութենէ  
կը բուժէ նաեւ նարագոյն մէթաւերով  
լղային եւ հոգեկան ու երեւակայական  
ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս  
նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի  
երեսի եւ ուսերու աչքի եւ ուղեւոր  
շարժումները եւ դաշտանի դադարում  
յառաջ եկած լղային խաւովումները եւ  
երիտասարդական մօլդանները, ինչպէս  
նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւ այլն:  
Կիրակիներէն զտա մէկն օր կէսօրէն  
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն  
դունի, եւ ուրբաթ օրերը ճիւղաբար կը  
դարմանէ վկայեալ աղքատները: 4-10

## ԹՈՒԲԱԽՏԻ ՎՐԱՅ

ԿԵՆՍԱԿԱՆ ԳՂՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց ՏՈՒԹ. ՅՈՎԱՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ժողովուրդին հասկնալի լեզուով մը բա-  
ցատրուած է ա՛յնքան տարածուած եւ վտան-  
գաւոր այս հիւաղութեան բնութիւնը, Յրո-  
տակօրէն ցուցուած են վարակումէ գերծ-  
մնալու պարզ կերպերն ու դարմանումի ա-  
մենէն բանաւոր եղանակները: Ամէն մարդու  
եւ ամէն տան անհրաժեշտ պէտքը:

Գիրը՝ միայն 60 փարա:

Դիմել Պալենց Գրատուն, Կ. Պոլիս, կամ  
Հեղինակին՝ Պարտիզակ:

Դրամ 1

# Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

## Հ Ր Դ Ե Հ Ի Ն Ի Օ Ն

|                                   |                |     |
|-----------------------------------|----------------|-----|
| Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք | 274,000,000    | Ֆր. |
| 1902ին գանձուած ապահովագրին       | 24,000,000     | »   |
| Դրամագլուխ երաշխաւորեալ           | 119,000,000    | »   |
| Ապահովագրեալ դրամագլուխ           | 21,500,000,000 | »   |

## Կ Ե Ն Ս Ց Ժ Ո Ւ Ղ

|                                   |             |     |
|-----------------------------------|-------------|-----|
| Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք | 129,000,000 | Ֆր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք          | 272,000,000 | »   |
| Դրամագլուխ եւ պահեստք             | 158,000,000 | »   |
| 1092ին գանձուած ապահովագրին       | 12,000,000  | »   |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնին» ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՆԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սահագոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպատաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնին ապահովագրողը ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bónéfices) ՅՊՈՒ Եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեալք գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ ԹՈՒՐԲԻՊ Եւ ԱՐԵՆԵԼԻ ՏՆՈՐԷՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Բաքըրն Ծղոլ

Մասնաձիւղ Ղալաթիա, Խնայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ զլխաւոր քաղաքաց մէջ

7-10

## ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵԱԽԱԳՐԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՐՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԵՐ

## ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային աղէկներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կանաւունի լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւուն է Ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօն

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Երասնեակ, Պոլիս, Ալեքսան Խան:

7-10

# ԲՈՒՈՐ ԵՐԱՆՈՅԻ ԵՎ ՆԱԽԵՆ

Եթեք որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



## SCOTT'S EMULSION

որնոր ակույ հանած ասեներն՝ բոլոր ցաւերէ և աղետներէ շանոնք կը փրկէ:

### ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ աուդջութիուն կուտայ և զանօք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները աուդջ և զօրաւոր մեծնան շնորհիւ:

### ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ:

Հեշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

24

# ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՏՈՐԻԱ ՏՇ ՊԷՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բոցակի միւղեր  
**VICTORIA** ՎԻՔՏՈՐԻԱ ՏՇ ՊԷՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան  
**DE** Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ  
**BERLIN** րուն վճարումները շարաթական մասնավճարներով տեղի կունենան,  
 սկսեալ 5 շրջանէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ծր. 1,491,279,236

Պահեստի դրամ 1904ին » 591,891,604

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար. **ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ**  
 Եւրոպայի ամենամեծ և ուղղակի Օսմ. Կայս. Պանքա-  
 կառավարութեան հսկողութեան ներ. և Բրէտի Լիոնէ  
 Բել. Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ  
 Ա. Կ. Լիւքսեմբուրգ

Կայաքա, Պերէքէր խան  
 Օրիանդ-Պանքի դէմ

# ԱՄԱՆԻՈՒ

54<sup>ր</sup> ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 27

3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

## ՀԱՎԱԼՔՈՒԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Երկու շաբաթ եւս, ու հակալքողական յօդուածներու մրցումը կը փակուի:

Առանց սխալելու երկիւղի՝ կրնանք ըսել թէ մեր լրագրութեան մէջ նմանը չի տեսնուած ընդունելութիւն մը գտաւ այս մրցումը, թէ՛ մասնակցողներու թիւին շատութեամբ եւ թէ՛ գրուածքներուն առատութեամբ ու պէսպիսութեամբ: Հոնրութեան օգտակար բան մը ըսելու, արեւցութենէ հրաժարելու մասին ազդեցիկ թելադրութիւն մը ընելու ճիշդ ու փափազը ակներեւ էր բոլոր գրութեանքներուն մէջ անխտիր: Բառին բուն նշանակութեամբ Գրական Մրցում մը չէր կատարուածը; և հետեւաբար յօդուածագիրները պէտք չունէին գրական նուրբ ձեւեր, սրամիտ դարձուածքներ տալու իրենց արտադրութիւններուն: Հաճելիէն աւելի օգտակարը փնտռեցին, ժողովրդեան ամէն դասակարգներուն հասկնալի ոճ ու լեզու գործածելով, ինչ որ գերադանցապէս կը համապատասխանէր այս մրցման հեղինակին ու մեկենասին անկեղծ բաղձանքներուն: Վասն զի, ինչպէս բացորոշապէս յայտնուեցաւ մերցման տեւողութեան միջոցին Յովհ. Էֆ. Թաւադանեանի կողմէ մեր Օրաթերթերէ ու մանց եւ Մասիսի ուղղած նամակներէն, որոնք հետաքրքրութեամբ կարդացուեցան միշտ, — իր միակ փափագն էր ալքոլամոլութենէ բռնուողներու թիւը հնար եղածին չափ պակսեցնել մեր համայնքին մէջ, ըլլա՛յ հարուստ դասակարգէն՝ ըլլա՛յ միջակէն կամ

աղքատէն: Եթէ հազար ընթերցողէն մէկը ազդուելով իր կարգացած որ և է հակալքողական յօդուածէ, փորձէ պակսեցնել իր գործածած ոգելից ըմպելիքին բաժակներուն թիւը կամ բոլորովին հրաժարելու յաջողի, ատիկայ բարոյական միակ վարձատրութիւնը, հոգեկան միակ գոհացումը պիտի ըլլայ գրասէր ու մարդասէր վաճառականին: Նիւթական զոհողութեան խօսք չենք ընել, համոզուած ըլլալով որ Թաւադանեան Էֆ. իր տրամադրած 62 անգլ. ոսկիի մրցանակը, — զոր ետքէն կրկնապատկեց՝ արտասպասներու վերաբերեալ երկրորդ Յայտարարութեամբ մը, — զոհողութիւն մը չի նկատել, այլ նուէր մը զոր կ'ընէ սիրայօժար ու ինքնաբերաբար, տեսակ մը philanthropic պարտականութիւն՝ հանրութեան ծառայութիւն մը մատուցանելու, օրինակի համար հիւանդանոցի շինութեան կամ մատակարարութեան սատարելու պէս, եւ մինչեւ մէկ աստիճան՝ անոնցմէ ալ վեր: Մարդ մը կ'աղքատանայ, կը տկարանայ, ու զինքը խնամող մը չունենալուն՝ հիւանդանոց կիյնայ: Բայց հիւանդանոց ինկողներուն եթէ ոչ մեծագոյն՝ գէթ մեծ մասը ալքոլամոլութեան զոհեր են, անով աղքատացած, անով խտտավարակ, ջլախտաւոր կամ ապուշ դարձած: Երբ ուրիշ հարուստներ հիւանդանոցը կ'ընդարձակեն ու աւելի հանգստաւէտ դարձնել կ'ուզեն, ինք՝ Թաւադանեան Էֆ. կ'ուզէ որ հոն պատասխարողներուն թիւը

նուազի, ալքոլամոլութեան ենթականերու թիւին նուազելովը:

Հեռուէն, որքան որ կրցած ենք գաղափար կազմել իր հաստատած եղական ու գեղեցիկ CONCOURSին վրայ, այս է անոր ոգին ու նպատակակէտը, և ահա թէ ինչո՞ւ համար կարգ մը սովորական դարձած նուիրատուութիւններէ գերիվեր կրնայ նկատուիլ այս մրցումը, իր համեստ պայմաններուն մէջ:

Գտնուեցան մեր մէջ գրագէտներ, և լաւագոյններէն, որոնք համակրելով հանդերձ գաղափարին, զգուշաորութեան պէս բան մը ունեցան,—ըսե՛նք ձեռնպահութիւն,— անոր մասնակցելու, մտածելով թերեւս թէ 5—10 ոսկի մրցանակի թեկնածու ըլլալու համար գրիչ շարժողի երեւոյթ պիտի առնէին ընթերցող հասարակութեան առջեւ. այս մտածումը, եթէ արդարեւ ունեցան, չափազանց փափկանկատութեան մը վերագրելի է՝ քանի որ իրենց ստանալիք դրամական մրցանակը կրնային նուիրել կրթական կամ բարեգործական հաստատութեան մը, ինչպէս տոջի օրէն չեչտեց Թաւշանճեան էֆ.ն: Գրական ու լրագրական կեանքի մէջ նորութիւններ կան, սակայն, որոնք վարանողներու կը հանդիպին, մինչ այդ նորութիւնները կրկնուելով, բարքերու մաս կազմելով, ընդհանուր ընտելացումի մը կ'արժանանան հետըզհետէ: Այսպէս, եթէ հակալքոլական մրցման յաջորդէ խաղամոլութեան դէմ զրուածքներու մրցում մը, համանման պայմաններով, թերեւս անհետանայ այս ձեռնպահութիւնը ու մեր բոլոր կարող գրիչները մասնակցին անոր:

Այս անգամ, ամէնէն աւելի՝ բժիշկներ ու դիտական յօդուածներու մասնագիտութիւն ունեցողներ առաջ անցան, ալքոլին բոլոր փաստակար տարրերը մէջտեղ դնելու, անոնց աւերիչ ազդեցութիւնը լայնօրէն բացատրելու համար, մինչ ընկերաբան գրիչներ կը նկարագրէին անհատական ու ընտանեկան կեանքի մէջ ալքոլամոլութեան պատճառած հաղարումէկ աղէտները:

Կարելի չէ որ այս բոլոր գրուածքները անաղդեցիկ մնան ու բարեբար հետք մը չի թողուն մտքերու վրայ: Բանի՞ հոգի ձեռք պիտի քաշէ այդ մոլութեանէն՝ իր ընթեր-

ցումներուն տպաւորութեան շնորհիւ. քանի՞ ընտանիք պիտի փրկուի բարոյապէս, ազատուելով այն կազ ու կոխներէն, տգեղ տեսարաններէն, որոնց տխուր հերոսները կը հանդիսանան արեւցող էրիկմարդիկ, իրիկունը, տուն դարձին: Հաւանաբար քիչ պիտի ըլլայ ետ կեցողներուն թիւը՝ «արմատացած»ներուն մէջ, բայց «սկսնակ»ները, նորահաս երիտասարդներ, աղուամազ պատանիներ աւելի մեծ թիւով մը պիտի ազդուին այս շինիչ հրատարակութիւններէն, լրջօրէն պիտի մտածեն իրենց առողջութեան, իրենց նիւթական վիճակին, իրենց ապագային վրայ զորս անխուսափելիօրէն պիտի խաթարէր, դատնացնէր արեւցողութիւնը: Վասն զի, ընտանեկան կեանքի տռամներ ալ պատմութեան հակալքոլական մրցումին առթիւ, սարսռազդեցիկ տեսարաններ նկարագրուեցան որոնք իրականութիւն են, դժբաղդաբար, այն յարկերուն տակ ուր արեւցող մը կայ:

Այս տեսակէտով, ամէն անոնք որ գրիչ շարժեցին ու անկեղծ համարձակութիւնը ունեցան իրենց յօդուածին ճակատը գետնի վրա «Թաւշանճեան Մրցանակին համար» բացատրութիւնը, շնորհաւորութեան արժանի են:

ԵՐՈՒՍԱՆԵՄԻ Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ նորընտիր Փոխանորդ Տ. Եղիշէ Վրդ. Զիլինկիրեան երկուշաբթի առաւօտ մայրաքաղաքս հասնելով՝ այցելեց Ս. Պատրիարք Հօր և միջօրէէն յետոյ Ատլիէի պաշտօնատունը երթալով՝ ներկայացաւ կրօնական գործոց տեսուչ Զիվէր պէյի ու Դատական Բարձր. նախարարի խորհրդական պէյին: Տ. Եղիշէ Վրդ. երկուշաբթի գիշերեց Պատրիարքարանի մէջ եւ երեքշաբթի օրը Ս. Պատրիարք Հօր հետ գնաց Երուսաղեմատուն ուր Տ. Գէորգ եպիսկ. Երէցեան իր յաջորդին փոխանցեց Փոխանորդութեան վերաբերեալ ամէն ինչ:

Նոյն եւ յաջորդ օրը, Տ. Եղիշէ Վրդ. ընդունեց կրօն. Ժողովի ատենապետ Սրբազանին եւ ուրիշ եկեղեցական Հայրերու, Պատրիարքարանի պաշտօնէութեան եւ այլոց բարի—գալուստի եւ շնորհաւորական այցելութիւնները:

## ԵՐԳ ԳԻՆԸ ՄԱԵԼԵԱՅ

(ԴՐՈՇՄԵԼԻ Ի ՎԵՐԱՅ ՀՆԱՄԵԱՅ ՍԱՓՈՐՈՅ)



Ո՛վ սիրելի, մերձ մատիւր, նի՛ստ և լուր ինձ,  
Տես ի կրժոյ այտի զիա՛րդ հոսէ ուխ  
Զինջ պաղպաղուն կարկաչածայն խրնդալից՝  
Ի ծերունւոյն Սիւենոսի անդր ի գլուխ(1) :

Սիւենն այն ծեր, սատիկ մըտեալ ընդ գինիս,  
Առաջնորդեալ ի զմբելոց Սատւերաց(2),  
Դըլուխ ի լանջօրն խոնարհեալ թաւարծիս՝  
Կակաչէ ստէպ, յեղյեղու զաչս յարբեկեաց(3) :

Բակքոս ըզհետ խաղայ փաւնայցըն դասուք(4),  
Բաղեղնազարդ պըճնեալ ճակատ դիւցական,  
Ապօղոնեանն որպէս ճակատ մեծալուք  
Յաստիս առոյգ մըլտածիծաղ մանկութեան :

Քըրմականանց խաղալկաց պարք ըզնովաւ,  
Ծընծղայք ի ձեռս, սըրինդ, նիզակ կարճաբուն,  
Ի Զակինթեայ(5) բերոցն արբեալք թուրմ թաթաւ՝  
Կամ ի Նաքսեան ուռոց մոլեալք՝ երգս առնուն :

1. «Ի գլուխ Սիւենոսի», իմա՛ ի բաժակ անդր գինւոյն :— Աստ բաղում ճարտարութեամբ զբաժակն գլուխ Սիւենոսի կոչէ բանաստեղծս, զի Բակքոսի դիցն գինւոյ, որ հայերէն կոչի Սպանդարամետ, դայեակ էր Սիւենոսն գինեղէն, ըստ հին ինչ վիպաց հելլենացւոց : Զսա՛ ըմբռնեալ երբեմն յաւերժանարանց ոմանց յանհնարին արբեցութեան, ներկեցին զերեսս նորա ի գոյն սեւագոյն թթոյ և կամ ըստ այլոց՝ մրով օծին :— Իբրև զբաժակն գինիից, ա՛յնպէս և լի գինւով ասէ լինել Լոնկֆելլօ զգլուխն Սիւենոսի :

2. Սատւերք գիք էին ի խոնարհագոյն կարգէ, և կամ պայք մարդկակերպարանք, որոց երկու բողկուկք ի ճակատսն և խողանեալ հերքն էին, և ստորին մասն մարմնոց նոցա՝ որպէս նոխազի, և յետուստք նոցա ագեւորք նկարագրէին : Սրինգ կամ նուագ գինւոյ ի ձեռս և կամ նիզակ փոքր տերեւապատ յաջում, այնպէս արբանեկեալ զնային ընդ Բակքոսի :

3. Զաչս յեղյեղու և ստէպ ստէպ կարկաչել է որոց գինւո՛ւն զգլխիցն :— Ի գիրս Պիտոյից ասի զարբելոց յիմարելոց թէ «տեսութիւնքն այլանդակաբար յածին, և բերանն զօրէն անամնոց անպատկանաւոր արձակէ ձայնս» : Որպէս տեսանի, Լոնկֆելլօ և մատենագիր Պիտոյիցն երկքին զոյգ զնոյն բանս վարեն վառն արբելոց :

4. Փաւնայք գիք զաչաց և անատաց, տեսուչք հօտից և արարոց երկրի, որոց տեսիլ կերպարանացն նման յոյժ Սատւերացն էին :

5. Զակինթոս կղզի յունական այգաւէտ. նոյնպէս և Նաքսոս՝ մեծագոյն ի Կիւկլադայս (Բուր Սիպրոս) : Դիոնիսեան տօնքն առանձին իմն խրախութեամբք կատարէին ի Նաքսոս, զորոյ զկաքաւչացն խումբս հռչակ հարկանէ Սոփոկլ յԱնտիգոնոսն իւրում, ասելով  
Արամազդայ տո՛մ մանուկ, օ՛ն երեւեաց միահոյլ

Նաքսիացի պարակցօքդ :

Որ ըզցայգն ի գլուխ կոչեալք՝ երգեն զիխանդ ըզՅակքոս :

(Սոփոկլ, Անտիգոնէ, Հանդէս, Դ.)

Այսպէս Սիւն տարաւ չըքեղ յաղթանակս  
ի ժողովուրդս ազգաց՝ առանց մաքառման,  
Նովաւ մըշակք ուսան բերել պատարագս  
Սոփա՝ ընդ զրահից, ուռա՝ ընդ դրօշից խաղմականս (6)

Սորհրդական ամբօխդ առնէ շատ ինչ յայտ (7)  
Թէ ոչ անդէպ ինչ խըստութեամբ դատիցի.  
Պիղծ զեղխելոց պատկեր Սիւնն է չըւայտ,  
Եւ Բակքոս յանձն առակէ զոյժ առնացի:

Այլ վաղ սահեալ և ի կորուստ գընացին  
Հին քարուականք դիւցախելար պաշտամանց  
Մեզ արդ Սատիւրք տանդ դիւաց գունդք թըւին  
Թէ ի մարդոց ըմբըռնիցեն զոք յանկարծ:

Մականակիր (8) գուշակք արդ մեզ ցուցանեն  
Ըզլեռնաբուխ ջինջ վըտակաց ըզցընցուդս.  
Կեանք անթարշամք յաղբերակունս բընակեն,  
Ո՛չ ի սըրուակս, ոչ ի կարասս, ոչ ի նկուղս:

6. Հակառակ բանիցն Վիրգիլեայ՝ որ քանքատելով իմն ասէ զգերանդիս մշակաց փոխել ի սլաքս առ իւրով ժամանակօքն, և զարօր ոչինչ արժանի լինել պատուոյ, և Արիսի մոլել ծագաց ի ծագս երկրի (Վիրգ. Մշակականք, Գիրք Ա. Տողք 522—526), Սիւնոսս, ասէ Լոնկֆելլօ, աղուական հեշտութեամբն և խաղաղական միջնորդօք, առանց խաղմի կռուոյ չահեալ տիրէր մտաց մարդկան, և տայր նոցա խոփս փոխանակ զրահից և ուռս որթոյ փոխանակ նշանաց մարտի բերել ի հանդէսս խրախճանութեան հասարակաց:— Փոխանակել գինւոյ զգէնս համարի յառաջադիմութիւն յաչս Լոնկֆելլօյի, իբրու թէ նշան մեղմական բարոյից և քաղաքային կրթութեան իցէ մեղկութիւնն որ ի գինւոյն պատճառիցի: Այլ մեք չտեսանեմք զիս՝ րդ փոխանակիցէ գինի զկուիւ, զի միշտ իսկ գինի և կուիւք ընդ միմեանս գրկախառն են:

7. Այսինքն այդ բաղմութիւն դից և կիսադից և բանքդ առասպելիաց որ զնոցանէն, ուսուցանեն մեզ բազում ինչ այլասացիկ բարբառովք, և ունին յինքեանս նշմարանս ճշմարտութեան և իմաստութեան, եթէ ոչ խստիւ և անդէպ նախանձաւորութեամբ դատափետ առնիցին:— Զայսոսիկ բազում դարուք յառաջագոյն քան զԼոնկֆելլօ ասացեալ է և Քերթոզայրն մեր, եթէ առասպելքն են «պերճ և ողորկ, հանդերձ պաճնառաւ, որք զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»:

8. Այսինքն գուշակք որ ունիցին գաւազանս ի ձեռնս:— Որպէս յայտ է, սովորութիւն էր հաւադիտաց եւ գաւազանահմայից եւ որոց գուշակէին գուշակութիւնս՝ ունել ի ձեռին գաւազան, որով գտանէին զաղբիւրս զօղեալս ի ներքոյ երկրի, եւ զգանձս եւ զբովս ծածկեալս ընդ հողով (մի մոռտսցի եւ Հերմեան գաւազանն): Եւ գլուցակ անուամբդ ակնարկէ աստ Լոնկֆելլօ զբժիշկս եւ զգիտունս որք ախտարակաց երկրի եւ կազմածոյ մարդկեղէն մարմնոյ հմուտք են: Բժիշկք, ասէ, ցուցանեն մեզ զաղբերակունս բղխեալս ի լեռանց՝ իրեւ առողջարարս մարմնոց, եւ ոչ զիչ եւ զթակոյկ գինւոյ:— Թէպէտ կամի Լոնկֆելլօ ի ձեռն բժշկաց արգաւորաց յորդորել զընթեռնիս ի ջրըմպութիւն, այլ թէ զբժիշկս գուշակաց կամ գաւազանահմայից նմանեցուցանիցէ՝ զարմանք են: Զի՞նչ օգուտ ի բարի բարի խրատուց Բանաստեղծին իցէ, յորժամ որովք պատկառեցուցանելն կամիցի, նոյն ինքն զնոսին խաղ առնիցէ:

Կըլաւդիոս Թէպէտ երգեաց զչի՜ գինւոյն  
 Եւ սարկարանս լիս յանապակ Հոննոսեան(9),  
 Այլ ըղբեղէն հոյզդ՝ որ օձից է արիւն,(10)  
 Ոչ ըմբռնեաց երբեք մարմնոյն ի դարման:

Նա՛ և հըմուտն իսկ Ռեդիոս՝ որ զԲակքոս(11)  
 Ի Տոսկանեան ի պերճ հովիտս անդ երգեաց,  
 Չէարբ ի ցըոյն՝ ում եկաց ինքըն քարոզ  
 Յաշխոյժս իւրոց դիթիրամբեան նըւագաց:

Ջըրով ցըրտով լից դու հա՛պա զկահոյրդ այդ  
 Ըզդըրոյմեալդ ընտրականօք հին վիպօք.  
 Ո՛չ Փալեոնեանն(12) իսկ քան ըզկուժդ այդ առատ  
 Եհեղ իմաստս ըզլուկուլլեան սեղանովք:(12)

Ո՛վ սիրելիդ, մերձ մատիր, նի՛ստ և լուր ինձ,  
 Մինչ ի մեր ձեռքս կուժդ յածի քաղցրաբուխ.  
 Տես զիա՛րդ ուխք իւր պաղպաղեն խընդալից  
 Ի ծերունւոյն Սիլենոսի անդ ի գլուխ:

Թարգմ. յանգլիականէ

ՏԻԳՐԱՆ ԵԼԻԲԵՆՃԵԱՆ

#### ԼՈՆԿԱՅՆԼՈ

9. Յայտ ամենեցուն է զի անուանի է գինի Հոննեան գաւառին Գերմանիոյ:

10. «Հրեղէն հոյզ» կամ «ծորան հուր» կոչէ զգինի, և մանաւանդ «արիւն օձի» կամ վիշապի: Սոյն այս անուն յորջորջանաց սքանչելի գիւտ հանձարոյ է, յորժամ նկատիցեմք զգինւոյն գլխմարեցուցիչ զթունաբեր հանգամանսն և զարիւնագոյն լինելոյ զկերպարանսն:

11. Ռեդիոս բնախոյզ խալապի յեթիմութեաներորդ դարու, որ և բանաստեղծ ևս լեալ՝ ի գովութիւն առնոյր զգինի, այլ բնաւ ըմպէր ոչ, և կամ ճշդագոյն ասել՝ ըմպէր ոչ ցարբենալ: Սորա է տաղ մի դիթիրամբեան (dithyrambic) կամ Երկդոնեան՝ անուանեալ Bacco in Toscana, ի պատիւ գինւոյն Տոսկանիայ, որ է գաւառ խալական՝ հնով անուամբ կոչեցեալ Ետրուրիա:—Իսկ արուեստ ճարտարութեան դիթիրամբեան սաղիցն և սքանչելի աւիւնն երգահանից որ ի բաղքոսական ժամանակն պայծառացեալ էին, այնու զի ի պատիւ Սպանդարամետին պաշտէին յաշխարհակոյտ հրապարակի, առ քրիստոսական ժամանակօք նուագեալ տակաւ տակաւ՝ և առ մեօք ամենեւին իսկ խափանեալ են: Երկդոնեան նուագքն որ ի յետին դարս յօրինեցան, մանաւանդ յօրինեալքն ի նորոց, զորօրինակ Տըլիւայն՝ որ անուանեալ կոչի l'Immortalité de l'âme, և տաղն Լամարդինայ՝ անուանեալ Chants Lyriques de Saül, Թէպէտ և դիթիրամբեան կոչեցեալք ի յօրինչացն, այլ բաց ի խառն և յալաչափ կարգմանէ տողիցն՝ հանգամանս ինչ բնաւ զերկդոնեանին ոչ ցուցանեն: Զի որ երբեմն ի տօնս և եթ ցնծութեան և ազգի ազգի գուսանական խաղութք և կենդանի շարժումովք երգեալ լինէին տաղքն, յետոյ ուրեմն առ Հռովմայեցւոյք՝ ըստ Որատեայ վկայելոյ, և անտի ևս յառաջ, ի զգօնական իմն կարգաւորութիւն փոխէին, որով և հին գեղեցիկ մովութիւնն հելլենական նուագեալ անկանէր:

12. Փալեոնեան իմա՛ զգինի Փալեոնոս լերին Խալիայ:—Չայս գինի գովէ վիրգիլ, և քան զՌեոտեանն՝ որ նոյնպէս ազգ ինչ խալական գինւոյ էր, գեր ի վերոյ համարի, յասելն

..... և յո՛ր նըւագ ըզքեզ երգեմ

Ո՛վ ուետեանդ, այլ մի դու մի գեր զՓալեոնեան խրոխտար մառանս:

(Վիրգ. Մչականք, Դիրք. Բ. Տողք 96—97)

13. Լուկուլլեան սեղան, այն է՝ սեղան լի համադամօք և ըմպելիօք և մեծասպաս փառաւորութեամբ:

# ՏԵՐ ԹԱԹԻԿ

(ԳԻՒՂԱՆՈՒՆ ԿՆՍՆՈՒՆ)

Կ\*\*\* գիւղը հազիւ չորս ժամուան հեռաւորութիւն ունէր Թաթիկենց գիւղէն։ Զմայելի կայք մըն էր, ապառաժուտ լեռան մը ստորոտը, չրջապատուած ծխախոտի արտերով և անսահման թթաստաններով որոնք գիւղին բնակչութեան ապրուստի միջոցներն էին։ Գիւղը նշանաւոր էր իր պատուական աղբիւրներով և համեստ ուխտատեղիով մը՝ ուր տարին անգամ մը պաշտամունք կը կատարուէր, աւելի օգտփոխութեան ու կերուխումի՝ քան կրօնային պաշտամունքի համար հաւաքուած ուխտաւորներու ներկայութեան։

Այս ամէնուն հետ մէկտեղ՝ Կ\*\*\* գիւղը աղուոր համբաւ մը չուներ, և ասոր պատճառը իր բնակիչներն էին։ Բնութիւնը ամէն շնորհ, ամէն առաւելութիւն տուած էր այդ գիւղին, զայն օժտած էր հմայիչ ու գիւթական պայմաններով, բայց միեւնոյն ատեն աշխարհի ամէնէն հակակրելի, ամէնէն նողկալի մարդիկը տուած էր անոր։ Այնտեղ էրիկմարդիկ բնաւ չէին աշխատեր, աւելի ծուլութեան մարմնացումներ էին, որոնց կեանքին մեծագոյն մասը կ'անցնէր գիւղին մէջ վիտացող գինեւորներու և սրճարաններու մէջ։ Առտուն կանուխ ելլել, նախաճաշ ընել, սրճարան կամ գինետուն երթալ, և նարտ ու թուղթ խաղալ մինչև ցերեկ։ Գերեկին վերադարձ դէպի տուն, ճաշ, յետոյ կրկին սրճարան կամ գինետուն, կրկին նարտ կամ թուղթ, մինչև իրիկուան ճաշի ժամը։ Գիւղին էրիկմարդոց ամբողջ աշխատութիւնը աս էր։ Իրենց ծուլութիւնը առածի կարգ անցած էր շրջակաները, այնպէս որ՝ ո՛ր և է գործի մէջ մարդու մը անփութութիւնը հեղեն ուզող մը՝ սովորաբար կ'ըսէր. «Շիտակը Կ\*\*\*ցիի մը պէս աշխատեր է...»։ Գալով կիներուն՝ ճիշդ հակառակն էին, տարապայման կերպով աշխատասէր, չարքաշ ու կորովի։ Առտունէ մինչև իրիկուն՝ անասունի պէս կը տատէին տունը

կամ արտերուն մէջ, տարւոյն բոլոր եղանակներուն ընթացքին։ Բնութեան մէկ վերէպը կար գիւղին բնակչութեան կազմութեան մէջ. չատ մը կանացի թերութիւններ այնտեղ այրերուն քով կը տեսնուէին, ինչպէս նաև չատ մը առնական յատկութիւններ կիներուն քով։ Կ\*\*\*ցի կին մը բամբասաճ չէր գիտեր. արդէն ժամանակ չուներ աւելորդ հոգերով զբաղելու. բայց այրերը՝ շատուկ կիներու պէս շարունակ իրարու միտ կ'ուտէին, իրար կ'անուանարկէին սրճարաններու անկիւնը, նոյն իսկ խաղերու ամէնէն տաք ատենները։

Բայց միայն ասոնք չէին գիւղին վատահամբաւութեան պատճառները։ Ուրիշ աւելի կարեւոր պարագայ մը կար, և ասոր համար մանաւանդ չրջականերէն այնքան գէշ աչքով կը նայէին Կ\*\*\* գիւղին վրայ։ Կիները՝ թէև սքանչելի տանտիկիներ և օժտուած ընտանեկան առաքինութիւններով, կրկին անթերի չէին. և որովհետև իրենց պակասձը կնոջական առաքինութեանց ամէնէն նուիրականն էր, այսինքն ամուսնական հաւատարմութիւնը, ընտանեկան բարոյականի ամէնէն կենսական պայմանին անաղարտութիւնը, հետեւաբար՝ միշտ տեղի կուտային ամէն կարգի քննադատութեանց։ Գիւղէն՝ պատուական սոնտու կ'ելլէր. օդն ու ջուրը չատ կորովի ու սնուցիչ կաթով մը կ'ուռնցնէին անոնց ստինքը. այս պատճառաւ՝ շարունակ կը վարձուէին քաղքէն. չատեր ալ, մասնաւորաբար չերամբաւածութեամբ զբաղելու միջոց չունեցողները, սպասաւորութեան համար քաղաք կը դիմէին։ Ու գրեթէ միշտ՝ այնպէս կը պատահէր որ փորձութեան չդիմանային։ Մէկ հոգուով քաղաք գացողը ընդհանրապէս երկու հոգուով գիւղ կը դառնար։

— Կ\*\*\*ցիք այնքան ծոյլ են որ, կ'ըսէին չրջականերէն, եթէ քաղաքը չըլլայ՝ մէկ սերունդը մէյ մըն ալ իրեն յաջորդ մը չի տեսներ...

Եւ այսքանը կը բաւէր իրենց միտքը հասկցնելու համար։

Տարօրինակը հոն էր որ էրիկմարդոց հոգը

չէր. պատիւ ըստածը՝ իրենց աչքին՝ բնաւ առնչութիւն չունէր այդ կարգի խնդիրներու հետ: Անոնք աւելի անպատուութիւն կը սեպէին սեպակի բառի մը կորսնցնելը՝ քան իրենց կնոջ քաղքէն յղի վերադարձը: Անհոգ ու անտարբեր՝ սրճարաններու մէջ կը խօսէին այդ կարգի բնագծեկան արկածներու վրայ. ամէնքն ալ արկածեալ էին թէև, այսինքն՝ ամէնուն ալ ընտանեկան կարգ ու սարքը խախտած էր այսպէս կամ այնպէս, բայց կրկին ամէնքն ալ, իրենց աչքին գերանը թողած՝ ուրիշին աչքին մէջ յարդի չիւղ կը փնտռէին:

Այդպէս չէր սակայն կիներուն համար: Կեանքի պայմանները թէև այնպէս կը բերէին որ այդ արկածները անխուսափելի դառնան իրենց համար, բայց դարձեալ տեսակ մը աւանդական, աւելի՛ տեսակ մը բնական ամօթխածութիւն զիրենք կը չիկնեցնէր, ամէն անգամ որ իրենց վրայ հիւսուած պատմութիւններ կը լսէին: Անոնցմէ ոչ ոք կը սիրէր այդպէս ասոր անոր բերնին ծամոց դառնալ: Անոնք կը սրտմտէին մանաւանդ այն ատեն՝ երբ իրենցմէ մէկը ըլլար զիրենք այսպնուղ: Պարագան հաղուաղէպ էր թէև, որովհետեւ քիչ մը ամէն կին իր կարգին գերծ չէր մնացած այդ արկածներէն, բայց վերջապէս շատ ծանր կը թուէր Կ\*\*\* գիւղի «վաստկուոր» ներուն, — ինչպէս կ'անուանէին զանոնք այդ կողմերը: Դուրսէն եկած մեղադրանքը եթէ մէկ կ'ազդէր իրենց վրայ, գիւղէն՝ իրենց մէջէն հասածը տասնապատիկ աւելի կատաղութիւն կը պատճառէր:

Տէր Թաթիկ չատ լաւ գիտէր այսպէս ըլլալը: Եւ ահա առտու մը՝ մէկ ձեռքը մեռելի չորցած գանկ մը, միւս ձեռքը թաւապատ Աւետարան մը, չունչը Կ\*\*\* գիւղը կ'առնէ, ու չիտակ արտերը գիմելով ծառի մը գագաթը կը բարձրանայ: Այլատուութեան ժամն է, և գիւղին կիներուն մեծամասնութիւնը կը տատի արտերուն մէջ, մինչ էրիկ մարդիկ՝ սրճարանները՝ իրենց յաւիտեանական թուղթի բառթիւներուն մէջ մխրճուած են: Տէր Թաթիկի երեւումը աննշմար չ'անցնիր: Նախ մէկը, յետոյ ուրիշ մը, յետոյ երրորդ

մը, և այսպէս՝ արտերուն մէջ գտնուող գրեթէ բոլոր կիները իր շուրջը կը հաւաքուին՝ զարմացած ու անստոյգ: Տէր Թաթիկ նախապէս ոչ իսկ ուշադրութիւն կընծայէ իրենց. մեռելի գանկը սրունքներուն մէջտեղ սեղմած՝ Աւետարան կը քաղէ անընդհատ: — Խնոր ըլլայ, Տէր հայր, կը ձայնէ կիներէն մէկը:

Պատասխան չկայ:

Կիները՝ ապշուածամբ իրարու կը նային, և ամէնուն ալ նայուածքը միայն մէկ բան հասկցնել կ'ուզէ: Չեւի՛ խելքը փախցուցած ըլլայ:

Բայց ահա Տէր Թաթիկ կը շարժի, աշունքները կը գատէ Աւետարանին էջերէն, և օրհնութեան ձեւով աջ ձեռքը ներկաներուն գլխուն վրայ պտտցնելէ վերջ կը պատմէ երազ մը զոր իբր թէ նախորդ իրիկունը տեսած է եղբեր: Կէս գիշերին՝ յանկարծ որոտման պէս ձայներ կիմանայ, կ'արթննայ ընդոտ, և ինչ տեսնէ...: Սենեակը երկնային լոյսով մը լեցուած է, և այդ լոյսին ճառանջներուն մէջ ալ կեցած է հրեշտակ մը որ կը գոչէ իրեն:

— Ոտքի՛ ելիր, ո՛վ Աստուծոյ ընտրեալը, Ս. Տակիրոսի ոսկորները պարտէզիդ մէջ անհանգիստ կ'ըլլան, պէտք է եկեղեցի մը շինես, բայց միայն մաքուր դրամով:

Թաթիկ իբր թէ գեղնամած կը տարածուի հրեշտակին առջև, որ սակայն փափկութեամբ կը վերցնէ զինքը և կը տանի պարտէզ՝ ուր երկուքը մէկ գետինը կը փորեն՝ և միայն գանկ մը, իր ձեռքը գտնուող գանկը կը գտնեն:

— Ա՛ռ այս գանկը, կ'ըսէ հրեշտակը, ասիկա թող քու ինչք ըլլայ, պտտցուր գիւղէ գիւղ, դրամ հանգանակէ որ անոր գրտնուած տեղը փառաւոր եկեղեցի մը կանգնես. բոլոր անոնք որ դրամ պիտի տան՝ Աստուծոյ ծառաները պիտի ըլլան, Աստուծոյ արքայութեան պիտի արժանան. բայց նայէ՛ որ մաքուր մարդու դրամ միայն առնես. անհաւատարիմ կիները մանաւանդ պէտք չէ մասնակցին այս հանգանակութեան. մերժէ՛ անոնց դրամը, միայն արդար մարդոց մօ-

տեղի, և թող Ս. Տակիտոսի օրհնութիւնը քու վրադ ըլլայ:

Ասոր վրայ, հրեշտակը դէպի երկինք կը բարձրանայ՝ գիտաւորի մը պէս իր ետեւէն քաշելով այն երկնային ճաճանչը որ զինքը կը չըջապատէր:

— Այս գանկը, կը յարէ Տ. Թաթիկ, փորձաքար մըն է, անմաքուր դրամը ասոր մէջը չի մնար, իսկոյն դուրս կը նետուի...

Եւ կ'\*\*\* գիւղի կիները կը հաւատան այս պատմութեան, կը հաւատան ա'յնքան որ մոմտուքը կը գրաւէ զիրենք: Դանկը անմաքուր դրամ չընդունիր, ուրեմն Ս. Տակիտոսի բարեխօսութիւնը իրենց համար չէ, քանի որ իրենց բոլոր առաքինութեանց փոխարէն՝ մէկ ամուսնական հաւատարմութեան առաքինութենէն զուրկ են առանձնապէս:

Բայց ահա մայր Մարթա՝ սոսկում ազդելու չափ տգեղ ջատուկ մը որ դիւղին մէջ մաքուր մնացած հաղուագիւտ կիներէն մէկն էր՝ վզէն կախուած քսակի մը բերանը կը բանայ, և դրամին հաճելի հնչիւնը կը լսուի չոր ու կարծրացած գանկին յատակէն: Դրամը իր տեղը կը մնայ:

— Աստուած ընդունելի արասցէ, Աստուած քու հոգիդ լուսաւորէ, կը մնջէ Տէր Թաթիկ՝ գանկին մէջէն դրամը անհետացնելով:

Մայր Մարթա՝ յաղթական նայուածք մը կ'ուղղէ չորջի կիներուն, նայուածք մը որ դաշոյնի հարուածի մը պէս կը ծակէ անոնց սիրտը: Տեսէ՛ք, ես մաքուր եմ, և դուք անմաքուր՝ քանի որ չէք համարձակիր գանկին մէջ դրամ նետելու: Այս միայն ըսել կ'ուզէ մայր Մարթայի նայուածքը: Միւսները կը կատողին ներքնապէս: Ինչ ընեն: Դրամ նետո՞ն թէ ոչ. հապա եթէ գանկը չընդունի իրենց նուէրը, այն ատեն... Անձկութեան քանի մը բոպէներ կ'անցնին, մինչև որ Տէր Թաթիկ հարկ կը տեսնէ միջամտելու:

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք, կ'ըսէ, Ս. Տակիտոսի օրհնութեան ապաւինեցէք, ասոր ներողութեան չափը անսահման է...

Այս խօսքերը տեսակ մը խթան կ'ըլլան

խեղճ կիներուն: Ամէնքն ալ քաջալերուած՝ կը բանան իրենց քսակները, և դրամներուն ամէնէն ծանրերը ընտրելով կը նետեն գանկին մէջ որպէս զի գոնէ դժուարաւ դուրս թռչին: Զարմանք... նետուած դրամները իրենց տեղը կը մնան, չեն թռչիր: Եւ ահա դրամ նետող նետողի:

— Աստուած ընդունելի արասցէ, Աստուած լուսաւորէ...

Տէր Թաթիկի բերանը ա'լ չի կայնիր: Կ'ըսէ ու դրամները կը գրպանէ: Եւ կիները կուտան ինչ որ ունին: Իրաւ է որ այդ ենթադրեալ Ս. Տակիտոսի վրայ իրենց ներշնչուած հաւատքը քիչ մը կը խախտի, բայց իրարու աչքին մաքուր նկատուելու տենչը ա'յն աստիճան զօրաւոր է իրենց քով, որ չեն ուզեր ասանկ պատուական առիթ մը փախցնել: Շատեր նոյն իսկ երկու անգամ, երեք անգամ կուտան՝ քիչ մը աւելի աչքի զարնելու համար: Աւելորդ է ըսելը թէ Ս. Տակիտոսի գանկը ոչինչ կը մերժէ:

Գիւղ վերադարձին՝ կիները լուրը կը տարածեն, և այն աստիճան կը պարծենան իրենց... վկայեալ անարատութեան վրայ որ միւսներուն փափաքն ալ կը սրուի:

Մէկ երկու շաբթուան ընթացքին՝ գիւղին բոլոր կիները, մաքուրներն ու անմաքուրները հաւասարապէս, կուգան կ'անցնին այդ նոր Պրոպատիկէին առջեւէն, և Թաթիկ միշտ կը գրպանէ: Դադքէն դարձողներն ալ չիտակ իրեն կը դիմեն՝ Ս. Տակիտոսի գանկին չնորհիւ անարատութեան վկայական մը ստանալու համար, այնպէս որ՝ Թաթիկ՝ վեց ամսուան մէջ թէ՛ Մըկըր չորպաճիի պահանջը կը հատուցանէ և թէ փառաւոր դրամ կը դիղէ, իր խաչագողութեան չըջանը ընդլայնելով մինչև բոլոր մերձակայ գիւղերը:

Գիւերուան կէսէն աւելին՝ Տէր Թաթիկի շահատակութեանց պատմութիւններով անցուցինք: Միշտ նոյն մարդն էր, միշտ շահատակութեան հետամուտ, միշտ քունն ու հանգիստը ծախող՝ երբ խաղ մը ունէր սարքելիք: Սքեմը ոչ մէկ փոփոխութեան ենթարկած էր զինքը: Այդ օրերն իսկ նոր ստանկու

թիւն մը կը մտածէր, և ատոր ծրագիրն էր որ պարզեց մեղի, տակաւին անկողին չմտած :  
— Պզտիկ օգնութիւն մը, ուրիշ բան չեմ խնդրեր ձեզմէ, և ամէն բան կը յաջողի, ըսաւ խնդալով :

Եւ մենք, խոստացանք աջակցիլ իրեն, որովհետեւ խնդիրը ժամկոչ Մարտոի վրայ էր :

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

(Վերջին մասը լաջորդով)

## ԼԱՅՈՂ ԱԶԳԵՐ

(ՍԻՐԵՐԳ)

Կը սիրեմ ես, աչքերն լացող,  
Լացող աչքերն աղուորիս,  
Անոնք սէր մը կուտան ցնցող :

Ա՛լ մարելու մօտ սրտիս :

Մեկամաղձոտ աչքեր տխուր,  
Սիրտ պարուրող հոգեզմայլ,  
Շունչ մը կարծես ունին մաքուր,  
Խորշակ մ'անգութ երբեմն ալ :

Ու սամուն կամ դեփիւռին  
Հարուածները դառնաղու,  
Գգուանքներ են լոկ անմեկին՝  
Յուսաբեկ եւ կենսատու :

Անա՛ ինչո՞ւ կը սիրեմ ես,  
Իրար խառնող հաճոյք վիշտ՝  
Լացող աչքերն այն սիրակէզ՝  
Աչքերն խոնաւ՝ բայց անշիթ :

Մ. Ֆ. ԷՊԼԻՂԱՅԵԱՆ

## ՕՐԹԱԳԻՂԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Օրթագիւղի Ս. Թարգմանչաց եւ Ս. Հռիփսիմեանց երկսեռ վարժարանները բարձր ուղղութիւն մը ստանալու վրայ են՝ նորակազմ թաղ. Խորհուրդին ջանքերուն շնորհիւ, որ լաւ տարրերով կազմակերպեց ուսուցչական մարմինը եւ մասնաւոր հոգա-ծութիւն կը նուիրէ նաեւ Մանկապարտէզին :

Հաճոյքով կ'արձանագրենք զպրոցական այս կարգադրութիւնները թաղի մը մէջ ուրուն վարժարանները փայլուն վիճակ մը ունէին երբեմն եւ հասուցած են ուսնալ չըջանաւարաններու սերունդ մը, երկուսն ալ :

Հռիփսիմեանց վարժարանը մանաւանդ կրնայ պարծիլ անցեալին մէջ իր դաստիարակած այն ուսանողուհիներովը որոնք՝ կին եւ մայր եղած՝ պատուաբեր դիրք մը կը գրաւեն մեր ընտանեկան լաւագոյն շրջանակներուն մէջ, ինչպէս Թարգմանչաց վարժարանն ալ ունեցած է, թէ՛ գրական եւ ուսուցչական եւ թէ՛ գործի ասպարէզներուն մէջ անուն ունեցող նախկին սաներ :

Կը յուսանք որ արդի թաղ. Խորհուրդին ջանքերը՝ այդ վարժարաններուն ուսման մակարդակը բարձրացնելու համար, արդիւնաւոր պիտի ըլլան, վայելելով թաղեցիներուն համակրանքը : Բաց ի Ֆրանսացի վարժուհիէ մը, դաստիարակ—ուսուցչուհիի պաշտօնին հրաւիրուած է Օր. Արմաւենի Փափաղեան, հմուտ եւ լեղուագէտ ուսուցչուհի որ թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառային վարժարաններու մէջ գնահատելի պաշտօնավարութիւններ ունեցած է եւ որ, վերջին անգամ, գաւառային վարժարաններէ իրեն եղած նպաստաւոր առաջարկները մերժեց՝ ինքզինքը նուիրելու համար իր ծննդավայրի վարժարաններուն կրթական գործին : Օր. Փափաղեանի եւ իրեն հետ պաշտօնավարելիք դաստիարակներուն ու դաստիարակուհիներուն ընտրութիւնը առաջին հաւաստիք մըն է արդէն Օրթագիւղի թաղ. Խորհուրդին ձեռնհասութեան ու հոգածութեան, որուն կրթասէր ջանքերը կը գնահատուին այժմէն :

## ՌՕՊԵՐԴ ԳՕԼԵՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կըսկսի սեպտ. 1/14ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղ-ձացուած կատարելութեամբ աւանդելու հա-մար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը ուսա-նողներու առողջութեան, մարմնամարդներու և խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ մասնաւոր շէնք մը կառուցուած է նորոգա-պէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց հա-մաձայն : Երկու տարիէ ի վեր բացուած է նաեւ փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչեւ տասը տարեկան աշա-կերաներ :

## ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ԴԷՍ

Այս դժպիտի ախտին ձեզ զգուշացնելու համար ի՞նչ միջոց գործածենք, կամ ամէնքն ալ հիւանդագին ու աղտոտ կեանքէ փրկուելու համար ի՞նչ ահեղի պատկեր մը գծենք, որոնք մեր սրտէն արմատախիլ ընելու չափ զօրաւոր ըլլան: Փճանալու վրայ եղող սերունդ մը, խանգարուած, վատթար խմացականութիւններ, կթոտ կամքեր, կարկամած մարմիններ, ընդարմացած դէմքեր, և դեռ ի՞նչ ըսեմ, ահա արգիւնքը արեւցոլութեան ու ալքոլամոլութեան, որ կը մտնէ ամէն մթնոլորտէ ներս, այնքան դիւրութեամբ որքան կը սահի իւղի պէս կոկորդներէ վար:

Այս սոսկալի ախտին աղէտքը որչափ ողբանք դարձեալ չպիտի կրնանք ճշգրիտ չափը տալ անոր վատ աղղեցութեան:

Ի՞նչ ալ գարշելի դիւտեր հնարուած են ալքոլականութեան մէջ, մարդը ու մարդկութիւնը հրապուրելու համար խմելու, աղանուհամ ըմպելիներ՝ որոնք իրենց մակերեւութային քաղցրութեան տակ կը ծածկեն հրէշային քանակութեամբ մանրէներ, կեանքին պիտանի հիւթը ու ծուծը սպառելու համար: Նոյն նահապետին սիրական աշխատանքին պտուղը կարծես չէր բաւէր մեր առողջ մարմինը անզգայ դարձնելու, և ահա՛ ցորենն ալ, գարի՛ն ալ և ուրիշ քանի մը չեմ գիտեր ինչեր խմորեցինք՝ անոնց զոհելու համար մեր մաքրին հանգիստը և սրտին զգացումները, կեանքին և առողջութեան համար մլասաբեր տարրեր փնտռեցինք գետնախնձորին, տանձին, դեղձին և զանազան պտուղներու մէջ ու այսպէսով ոչ միայն մեր ներկան, այլ նաև մեր սերունդի ապագան հիւանդկալի դարձուցինք: Բաղաքակրթութեան աճումին հաւասար արագութեամբ աճեցուցինք խմորուած ըմպելիներուն քանակութիւնը և բարոյականութեան հին քարոզութիւններուն չափով ընդարձակեցինք նաև արբելու ու

նակութիւններ: Հայրեր իրենց զգայութիւնը կորսնցուցին և ամօթապարտ եղան իրենց զաւկներուն քով ու այս վերջինները՝ չատ կանուխէն ինկան այդ թշուառացուցիչ մոլութեան մէջ:

Բայց չի կարծուի թէ բարոյականի դպրոց բացած ենք հոս, այս սիւնակներուն մէջ, ո՛չ, այլ պարզապէս արձագանդ կ'ըլլանք Բարիդեան բժշկական Հանդէսի մը խորհրդածութիւններուն արեւցոլութեան մասին, որ դիպուածաւ հանդիպեցաւ աչքերնուս:

\* \*

Ալքոլի տուրքի հասոյթներուն վրայ պատրաստուած վերջին վիճակադրութենէ մը կը հետեւի թէ սպառումը փոխանակ նուազելու կ'աւելնայ միաժամանակ մէջ և ալքոլախտի պատուհասը կը տարածէ իր աւերումները: Տոքթ. Ալֆոնս Հիւմպէս հաստատած է թէ քաղաքներու չափ գիւղերուն մէջ ալ վարակուած է այն և թէ միջին, էսնաֆ, դասակարգը վար չի մնար աղքատ դասակարգերէն: Տասնըփնգ տարիներու միջոցին գինեատուներուն թիւը ութսուն հազարի բարձրացած է, և այս սոսկալի առաջատուութեան վախճանը չէ կարելի երեւակայել: Անշուշտ աւելորդ չըլլար եթէ հոս նոյն իսկ Տոքթ. Հիւմպէսի խօսքերը յիշատակենք:—

«Ալքոլամոլութեան պատուհասը կ'արշաւէ միաժամանակ մէջ այնպիսի արագութեամբ որ երկիւղ ու վախ կ'ազդէ մեր ցեղին ապագային նկատմամբ: Իրեն անձնատուր եղող ժողովուրդներուն մէջ կը ծաւալէ սարսափելի հիւանդութիւններու սերմեր որոնք կը փոխանցուին իրենց զաւկներուն: Կ'ամայացնէ մեր դաշտերը, կը պարպէ մեր արհեստանոցները, կը հիւանդացնէ և կը նուաղեցնէ մեր թարմ ուժերը, կը լեցնէ մեր հիւանդանոցները և յիմարանոցները, աղբերակէն կը պղտորէ բոլոր այն ուժերը որոնցմով կը գործէ, կը մեծնայ եւ կը ճառագայթէ միաժամանակ: Ուրեմն բան մը չի պիտի ընենք պատուհասին ընթացքը կասեցնելու համար որ օր ըստ օրէ առաջդիմելու վրայ է»:

Այսքան պերճախօս պախարակումէ մը վերջ, կ'աւելցնէ Մեսքսիկա — մօսկուի քրոնիկագիրը,

գիւցաղնական առաջարկութիւն մը պէտք է՝ չարիքը դարմանելու համար, ըստ որում մահու եւ կենաց խնդիր մըն է մեր ամբողջ տոհմին համար: Եթէ ճշմարիտ է, ինչպէս կ'ըսէ Տօքթ. Հիւմպէն, թէ փրանսական կենսականութեան ուժեր վարակուած են, ապահովապէս կրնանք նախատեսել, վիճակագրութիւններու ուսումնասիրութեամբ եւ բժշկական գիտութեամբ հաստատուած բնախօսական ժառանգականութեան օրէնքով, թէ ի՞նչ պիտի ըլլայ Յրանսա ասկէ չորս — հինգ սերունդ վերջը: Ճակատագրական անդարմանելի վատթարացումը հեռաւորութեան մը մէջ չէ, շատ մօտիկն է, պատրաստ է ալքովամով սերունդը քշելու անդունդին խորերուն մէջ, եթէ բարոյական կամքի եւ փայլուն իմացականութեան կորուրի ջանքով մը չի հեռանայ այն զառիթափէն որ զինքը կը հրապուրէ եւ ուր կըսկսի սահիլ: Շուէտ, Զուիցերիա, Գերմանիա, Անգլիա, Քանադա ջնջեցին ալքովախտը եւ խոյս տուին վտանգէն:

Իսկ Թուրքիոյ մէջ, ինչպէս յայտնի է, կայսերական բարձր հրամանաւարգիլուեցաւ արեւցոթիւնը Խալաֆներուն, եւ այս հանրօգուտ արգելքէն օգտուեցան նաեւ քրիստոնեաներն ալ, ըստ որում տակաւ տակաւ սկսան գինետուն չի յաճախել:

Յրանսա կարող չէ այդ կորուրի ճիգերն ընելու: Գինետուններու թիւը սահմանափակելով՝ եւրոպացիներն ինչպէս կը հասնի, ալքովին մենաշնորհը առեւտրական ազատութեան հակառակ է...

Տօքթ. Հիւմպէն ի՞նչ խորհուրդ կ'ուտայ: Միայն մէկ բան: Գինին սպառման ընդարձակուելուն օգնել. իր կարծիքով, այդ է միակ դարմանը ալքովին սպառումը նուազեցնելու: Աւա՛ղ, կը գօչէ Մէքսիքոյ — Մոսկովի եւ իրաւամբ: Եթէ Տիւքլոյութիւն հոսող այդ դարմանը միայն պիտի գործածենք, կը վախցուի որ մեր հիւանդութիւնը տեւական չըլլայ եւ աւելի երկար առեն չվատթարանայ: Մ. Հիւմպէն կը կարծէ թէ գինին ալքովին թշնամին է. երբեմն թերեւս այնպէս էր, երբ ալքոլներու արհեստական պատրաս-

տութիւնը չկար: Ճշմարտութիւնը այն է թէ մենք, Յրանսացիներս, չպիտի կրնանք խուսափիլ ալքովախտէն եւ իր մահացու հետեւութիւններէն, եթէ չուզենք խելքով եւ կամքով մաքաւիլ անոր դէմ: Ասոր համար բանասէի պէտք չի կայ, այլ պէտք է ամէն օգտակար միջոց գործածել, ամէն անհատական, հաւաքական, եւ բարոյական բարի կամքերու կոչում ընել, հակալքողական գաղափարը ծաւալել գիրքերով, բանախօսութիւններով, դպրոցներով, եկեղեցիներով, խօսիլ մեծերուն ու պղտիկներուն, ընտանիքի մայրերուն եւ հայրերուն: Այսպէս ըրին բոլոր ուրիշ ժողովուրդները, որոնք մասամբ մը յաջողեցան իրենց սպառնացող ալքովին վտանգը հեռացնել: Անգամ մըն ալ ըսենք թէ, այս բանը մէկ օրուան մէջ չըլլար, ո՛չ ալ մէկ ճամբով, բայց շատ բան ըրած կ'ըլլանք, երբ կարենայինք յաջողիլ նախ ջնջել ալքովախտութեան չարիքին առաջխաղացութիւնը եւ յետոյ հաստատել թէ ամենուն ջանքերով կամաց կամաց ետ կը քշուի: Կարելի է նախ արգիլել արհեստական կերպով պատրաստուած ալքոլներուն վաճառումը ի Յրանսա, կ'ըսէ Վիթու: Շուէտի մէջ եւ այլուր այսպէս կ'ըլլայ:

Ինչո՞ւ չի պիտի յաջողինք մեր աշխատող եւ միւս դասակարգերը պաշտպանել ալքովին շահագէտներուն դէմ: Քոնդուրի տակ առնուած են կարագը, գինին եւ ուտելիքները, ի՞նչու պարտաւորիչ չըլլայ նաեւ ալքոլներուն հարադատութիւնը ճշդել: Ահա առաջին կէտ մը:

Երկրորդ, պէտք է պակսեցնել գինետուններուն թիւը: Շատ երկիրներու մէջ յաջողած է այս: Երրորդ, քաջալերել հակալքողական պայքարները որոնց կը ձեռնարկեն մասնաւոր մարմիններ, նախնական վարժարաններու աջակցութիւնը, բժշկական բանախօսութիւնները, ժողովակալութեան եւ բարեխաղութեան ընկերակցութիւնները:

ՏՕՔԹ. Տ. ԱԼԼԱՅԿԷՐՏԻ ՈՐԴԻ



# ՄԻԼԻՈՆՆԵՐՈՒ ԶՈՒՐԶԸ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ)

ԲԱՂԴԱԽՆԴԻՐ ԱՄՈՂԻ ՄԸ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարիզի «Բռնշդան» մեծ վաճառատան վարիչ Պ. Ժիւլ Ժալիւզոյի սնանկութիւնը՝ որ առաջ եկած էր չաքարի գործառնութեանց մէջ իր շահադիտութեանց հետեւանքով ահագին գումարներու կորուստէն, և ուրիշ միլիոնատէրի մը՝ Պ. Բոնիէի անձնասպանութիւնը՝ նոյնպէս իր վարած չաքարի զտարանին կրած յիւսանքուն հետեւանքով, որոնք միլիոններով կը հաշուին, պահ մը մոռցնել տուին Ժան Կալէն կամ իր կեղծ անունով «Պառն տը Կռալալ»ը, Բոնիէուտիսքոնդ դրամատան այն զեղծ պաշտօնեան որ հինգ միլիոնի չափ ֆրանք իւրացնելէ և մտնելէ ետք՝ իր հոմանունին հետ փախաւ Բարիզէն, և այս պահուս կը գտնուի Պրազիլիոյ Պահլա քաղաքը՝ ուր ձերբակալուած են երկուքն ալ, սպասելով իրենց ճակատագրին որ պիտի վճռուի՝ ֆրանսական կառավարութեան կողմէ ճամբայ հանուած ոստիկանական պաշտօնեաներուն ժամանման:

Եւ սակայն Ժան Կալէի կատարած խարդախութիւնները իր պաշտօնավարած պանքային մէջ, և իր վարած կեանքին ու փախուստին պարագաները՝ Օրուան Լուրերու մէջ յիշուելիք ու մոռցուելիք իրողութիւններէն չեն, ու բոլորովին վիպական հանգամանք մը ունին, — թէ և տխուր ու նողկալի կերպով վիպական: Ամսական 300 ֆրանք թոյլ ստացող այդ թղթակցութեանց ճիւղին պաշտօնեան որ մէկ գիշերուան մէջ հազար ոսկի կը ծախսէր, որուն հոմանունին՝ Տիկին Մէռէլի՝ իր արդուգարգերովը, աղամանդներովը, կառքերովը կը մրցէր Բարիզէն չքեղ ու է՛ն հարուստ կիսաշխարհիկ կիներուն հետ, մոլեգին ու տենդազին արկածախնդրութեան մը մէջ նետուած էր, որուն գաղտնիքն ա՛յն առեւն միայն իմաց-

ուեցաւ՝ երբ ինք Գաթարիմա զբօսանաւով, — վասն զի այս յանդուգն երիտասարդը զբօսանաւ մըն ալ վարձած էր իր փախուստին համար, — Ատլանտեանի ալիքները ձեղքելով կերթար դէպի Պրազիլիոյ ծովեզերքը: Ժիւլ Մառիի, Էմիլ Կապորիէօի վիպասանութեանց մէջ միայն կարելի է հանդիպիլ այս տեսակ բաղդախնդիրներու, զորս երեւակայութեան ծնունդ կը կարծենք. հո՛ս՝ իրականութիւնն է, դրական, չօչափելի իրականութիւնը, վիպական ձեւի տակ:

Ժան Կալէ հազիւ 35 տարեկան կայ. ամուսնացած է ու զաւկընելու տէր. իր ընտանիքը կը բնակեցնէր տարեկան 600 ֆր. վարձքով փոքրիկ արառդման մը, մինչդեռ հոմանունին չքեղ բնակարանին տարեկան վարձք կուտար 2700 ֆր., միւս ծախքերն ալ նոյն համեմատութեամբ: Այնպէս որ, կրկնակ կեանք մը կ'անցունէր. օրուան կամ գիշերուան մէջ քանի մը ժամ միայն երեւնալով իր տունը, իր ընտանիքին մէջ, ու մնացեալ ժամանակը անցունելով կիւսթաւ — Ֆլոպէռ փողոցը, Տիկին Մոռէլիի հետ, «Պառն տը Կռալալ» ծածկանունով:

Պարկեշտ ու բարեհամբոյր էակ մըն էր Ժան Կալէի կինը որ կը տոկար իր ամուսին խտրութիւններուն ու քմահաճոյքներուն, շատ անգամ, արշալոյսին տուն կը դառնար Կալէ, գլուխը տաքցած շամբանիայէ ու կնոջը հարցումներուն բրտօրէն կը պատասխանէր, երբեմն մինչև իսկ ծեծի վազելով վրան: Ատեն ատեն, դրամական նեղութեան մէջ կը թողուր զայն, ու կինը կը հարկադրուէր իր ծնողքէն քիչ մը դրամ ուզելու: Կը պատահէր երբեմն ալ, որ ամուսինը տուն դարձողները պանքոթներով լեցուն և մէկ ձեռքէ 150 — 200 ֆր. տար կնոջը: Եւ երբ այս վերջինը կը հարցնէր թէ ուսկի՞ց

ձեռք անցուցած է այդ դրամները, երիտա-  
սարդը սուտեր կը շինէր, թէ ինքնաշարժ  
կառքի վաճառման միջնորդութիւն կ'ընէ՝  
իր գործէն դուրս։ Իրիկուն մը, Տիկին Կալ-  
լէ ուղեց իր ամուսնին ընկերանալ, որ չի  
կրնալով պատրուակ մը գտնել մերժելու,  
սոսաջնորդեց զայն Բարիզի աշխարհիկ սըր-  
ճարաններէն մէկը. հոն, ըստ սովորութեան,  
իր բարեկամները չըջապատեցին զինքը.  
ձեռքի սեղմումներ և «Պառոն» պատուա-  
նունով յորջորջումներ. հէգ կիներ շուարած  
կը մնար և չէր հասկնար զաղտնիքը։ Ամու-  
սինը կարճ կապեց ու շուտ մը տուն վերա-  
դարձուց կիներ. յաջորդ օրը գիւղ կը խրկէր  
զայն՝ զաւակներուն հետ, օգափոխութեան  
համար։ Այդ միջոցներուն էր որ կեղծ «Պ.  
տը Կալլէ»-ը իր փախուստի պատրաստու-  
թիւնները կը տեսնէր հոմանունիին հետ։

Այս փախուստին պատմութիւնը կարդալէ  
առաջ, Մատիսի ընթերցողները պիտի հե-  
տաքըքուին անշուշտ իմանալու թէ, ժան  
Կալլէ՝ իր ծառայած դրամատան մէջ թըղ-  
թակցութեան ձիւղի պաշտօնեայ մը կամ  
գիւանապետ մը ըլլալով, որուն ձեռքէն  
ո՛չ դրամ ո՛չ արժէթուղթ չէր անցներ ու  
Սնտուկին հետ գործ չունէր բնաւ, ինչպէ՞ս  
կրցած է միլիոնաւոր Ֆրանքի գումարներ  
իւրացնել։ Խարդախ երիտասարդին ընտրած  
եղանակը որքան դատապարտելի՝ այնքան  
հնարիմաց ու ճարտար էր արդարև ու մեծ  
փափկութիւն կը պահանջէր չի յայտնուելու  
համար, ինչպէս որ յաջողած էր շարունակել  
ամիսներով։ Նախ պէտք է ըսել թէ Կալլէ  
յետին ծայր վարպետ էր՝ գիր և ստորագ-  
րութիւն կեղծելու մէջ։ Քօնթուառ տ'էս-  
քօնթ հասած կամ անկէ զրկուած թղթակ-  
ցութեանց մէկ մասը իր ձեռքէն անցնելուն  
չնորհիւ, սա հնարքը կը գործադրէր։ Պան-  
քային մէջ պահեստի մեծաքանակ դրամ  
ունեցող մեծահարուստ այս կամ այն ան-  
ձին ստորագրութեամբ կեղծ նամակ մը  
կը սահեցնէր թղթաբերի նամակածրարին  
մէջ, Պանքային վերատեսչութեան յանձնա-  
րարող որ իր հաշւոյն 50 կամ 100 հազար  
ֆրանք վճարուի Տիկին Մէռէլիի և կամ

Պառոն տը Կալլէի հրամանին։ (Կալլէ՝ այս  
կեղծ անունով ընթացիկ հաշիւ մը բացած էր  
ուրիշ դրամատան մը մէջ, ուսկից ինք կամ  
իր հոմանունիին կերթային գանձել՝ Քօնթուառ  
տ'էսքօնթի կողմէ փոխանցուած գումարը)։  
Հաշուակալութեան պաշտօնէութիւնը նամա-  
կին վաւերականութիւնը ստուգելէ՝ վերջ,  
վճարման կամ փոխանցման հրամանը կուտար  
Սնտուկին։ Բայց գործը այսքան դիւրաւ  
չէր կրնար լինալ։ Պանքային Տնօրէնու-  
թիւնը, նոյն օրուան իրիկունն իսկ, ըստ  
օրինի կը ղեկուցանէր դրամատիրոջը՝ թէ իր  
յանձնարարած վճարումը եղած է. այս պա-  
տասխանագիրն ալ Կալլէի գիւանէն պիտի  
անցնէր, որ պատրուակ մը կը գտնէր գրա-  
սենեակի սպասաւորին ձեռքը գտնուած  
թղթածրարին մէջէն առնելու կնքուած ու  
դրոշմուած նամակը և զայն անհետացնելու։  
Այնուհետեւ, լայն շունչ մը կ'առնէր։ Այս  
ճարտար խաբեքան մասնաւորապէս հոգ կը  
տանէր Պանքային մէջ մեծկակ գումարներ  
ունեցող յաճախորդներուն անուններն ընտ-  
րելու, որպէս զի հարկը հազար կամ աւելի  
գումարի մը խորուրդ չատ զգալի չըլլար  
Պանքային Տնօրէնութեան համար և ուշադ-  
րութիւն չի հրաւիրէր։ Վերջին անգամուն,  
օգոստոսի սկիզբները, Պանքան նամակ մը  
կըստանար իր յաճախորդներէն մէկէն, — որուն  
հաշւոյն համեմատաբար փոքր գումար մը  
իւրացուցած էր Կալլէ՝ առանց սակայն յա-  
ջողելու անոր ուղղուած նամակը ձեռք ան-  
ցունել, — որ զիտել կուտար թէ ինք վը-  
ճարման որ և է յանձնարարութիւն չէր ըրած։  
Տնօրէնութիւնը իսկոյն ընդհանուր աւանդ-  
ներու հաշիւներուն քննութեան ձեռնարկեց  
որու միջոցին... Կալլէ խոյս կուտար։

Այս խարդախութեան գործին մէջ, ամէն  
բան արտաքուստ վիպական երեւոյթ մը  
ունի, ինչպէս ըսինք, և անոր տխուր հե-  
րոսունիին ալ, Տիկին Մէռէլիի, — Կալլէի մեղ-  
սակցունիին, — բաղդախնդիր մըն էր՝ որ իր  
ընտանեկան համեստ ու հանգիստ վիճակը  
թողուցած էր՝ կառքեր, ձիեր, շքեղ արդու-  
ղարդեր ունենալու, Բարիզի նշանաւոր պըչ-  
րուհիներուն նմանելու մղձաւանջէն բռն-

նուած: Դէմքով սիրուն ու գրաւիչ կին մը, բայց ամէն բան կեղծ էր իր վրայ... Նոյն իսկ իր գեղեցիկ մազերը, ինչպէս երեւան կը հանեն բարիդեան քրոնիկազիրները անողոք հեգնութեամբ: Իր ամուսինէն բաժնուած էր, գերասանուհի ըլլալու համար, բայց միջակ յաջողութիւն մը գտնելուն՝ թատերարեմէն ալ ձանձրացաւ ու վերջապէս գտաւ մեծահարուստ Շիլիցի մը որ իր բոլոր քմահաճոյքները կը գոհացնէր. անոր հետ առաջին ճամբորդութիւն մը կատարեց դէպի Ամերիկա, ու վերադարձին էր որ յարեցաւ կեղծ Պ. տը Կռավալի, սկիզբները ճշմարիտ հարուստ մը եւ ազնուական մը կարծելով զայն: Եւ արդարեւ, կեղծ Պառոնը՝ համակրելի երեւոյթով երիտասարդ մըն էր, խարտեաչ մազերով, ոսկի ակնոցներով, միշտ վայելչապէս հագուած, վերջին նորաձեւութեանց համաձայն, ու բարեմոյն ձեւերով՝ թէեւ խաբեպատիր: Շատ չանցած, ղլրար ճանչցած էին ու իրենց շուայտ յարաբերութեանց մէջ գործակցած էին Քոնթուառ տ'Էսքոնդի միլիոնները շորթելու եւ մսխելու:

Իրենց փախուստը որոշելուն պէս, Հավրի մէջ վարձեցին գեղեցիկ զբօսանաւ մը, Քաթարիմա, երեք ամուսնի համար, 45,000 ֆր.ի, ուսկից զատ իրենք պիտի վճարէին նաւապետին ու նաւաստիներուն վարձքը. բոլիկ մըն ալ գտան զոր միասին առին, մեծկակ վարձատրութեան մը խոստումով: Մեծահարուստ զբօսաշրջիկներու ճամբորդութիւն մը կազմակերպած էին, մէկ խօսքով, և Հավրի մէջ ամէն մարդ ճշմարտապէս Պառոն մը եւ Պառոնուհի մը կը կարծէր զիրենք: 20,000 քիլօ բեռ առած էին հետերնին նաւուն մէջ, անտուկներով հագուստ, արդուզարդի առարկաներ, ուտելիք, խմելիք եւ 4000 քիլօ սառոյց: Աւելորդ է յիշել դաշնակը որուն առջեւ կ'անցնէր Տիկին Մէռէլի, իրիկունները, երաժշտական հեշտալուր կտորներ նաւազելու ու երգելու՝ Ուլկէանոսին անհղաճօշ ալիքներուն ձայնակցութեամբ, մինչ «Պառոն»ը շամբանեա կը հրամցնէր նաւապետին ու նաւաստիներուն:

Մինչ բաղդախնդիր ամուրը այս հեշտալի ծովադնացութիւնը կը կատարէր, Փրանսայի ու Հարաւային Ամերիկայի ծովեղերքներու պաշտօնէութիւնք հեռագրական հաղորդակցութեան մէջ էին իրարու հետ՝ անոնց հետքը չի կորսնցնելու համար:

Կալէ և իր հոմանունին Բարիզէն մեկնած էին գիշեր ժամանակ, ինքնաշարժ կառքով մը, — վասն զի երկաթուղի չէին ուղեր նստիլ՝ ճանչցուելու վախով, — և երկու օրէն Հավր հասած էին, առաջին գիշերը Ռուան անցուցնելով: Ինքնաշարժին տիրոջը առ հաշիւ 600 ֆր. վճարած էին Բարիզ, մնացեալն ալ զրկելու խոստումով, ու մեքենավարն ալ առատապէս վարձատրած էին. ճամբան: Հավր հասնելուն, «Պառոն»ը ու Տիկինը կառքէն վար իջան Փրաքաթի Օթէլին առջեւ ուր մեքենավարը երկու ժամ սպասելէ ետքը, զնաց տեղեկութիւն հարցունել թէ ինչ եղան իր յաճախորդները. պատասխանեցին թէ անոնք չոգենաւ գացած էին. մարդը իսկոյն հեռագրեց Բարիզ, իր վարպետին, որ հրահանգ տուաւ իրեն ինքնաշարժը ետ բերել. այնքան միամտօրէն խաբուած էր, որ կը հաւատար թէ իր «ազնուական» յաճախորդը՝ Բարիզ վերադարձին պիտի կարգադրէր հաշիւը:

Այն 8-10 ժամուան միջոցին ուր Քաթարիմա զբօսանաւը մնաց Հավրի նաւահանգիստին մէջ, խոսիւ պատուիրուեցաւ նաւաստիներուն՝ տեղերնուն չի շարժիլ: Կալէ կը կառկածէր որ եթէ ցամաք ելլէին՝ թուրքերանութիւն մը կ'ընէին: Կէս օրուան մօտ, հոմանունին ըսաւ թէ կարեւոր գնում մը մոռցեր է ու ցամաք ելլելով՝ անձամբ գնաց 150 չիլ հանքային ջուր զոր չոգենաւ փոխադրել տուաւ: Իրիկնամուտին, Քաթարիման խարիսխը կը վերցնէր ու բաց ծովը կ'եկէր:

Թէ Բարիզեան ոստիկանութիւնը ինչպէ՞ս յաջողեցաւ գտնել փախստականներուն հետքը, այդ ալ հետաքրքրաշարժ է: Գործը յանձնուած էր Տըպիլօ անուն պաշտօնէի մը որ՝ Քոնթուառ տ'Էսքոնթի խարդախ գրադարին լուսանկարը գրպանը, Բարիզի երկա-

Թուղիի կայարանները պտտեցաւ ու ցցուց զայն. ո՛չ ոք կը յիշէր այդ տեսակ անձի մը մեկնումը տեսած ըլլալ որ և է կառախումբով: Միայն, կայարանի մը մէջ պտտասխանեցին իրեն թէ թխադէմ կին մը,—ետքէն հասկցուեցաւ թէ Տիկին Մէրէլիի սենեկապանուհին է եղեր՝ որ անոր հետ փախած է,—մեծաքանակ սնտուկներ ու պայուսակներ յանձնած էր ապրանաց ճիւղին: Հաւր զրկուելու համար: Սյդ սնտուկներուն 40ը ֆէլիքս Բօթէն վաճառատան մարքան կը կրէին. Տըպիլօ կռահեց թէ ասոր տակը բան մը ըլլալու է և գնաց յիշեալ վաճառատունը ուր իմացաւ թէ միեւնոյն թխադէմ կինը այնտեղէն գնած էր լիառատ պահածոյ ու տեղիքներ՝ ծովային երկար ճամբորդութեան մը համար: Այն ատեն, ոստիկանութեան պաշտօնեան ղիմեց նաւայարդարութեան գործակալի մը որ զբօսանաւեր վարձու կուտար և ցոյց տուաւ Կալէի լուսանկարը:

— Բայց կը ճանչնամ, գոչեց գործակալը: Պառոն տը Կռաւլալն է...

Այս կերպով իմացուեցաւ Քաթարինա զբօսանաւին վարձուելուն պատմութիւնը, փախստականներուն Հաւրէ մեկնումին պարագաները և այլն: «Թխադէմ կին»ը մեծ դեր խաղացած է կեղծ Պառոնին ու Պառոնուհիին փախուստին մէջ, Բարիզէն Հաւրինք կատարելով ամէն գործառնութիւն ու գնում, որպէս զի անոնք երեւան չեւեն: Կալէ, որ ինքզինքը հարուստ զբօսաշրջիկ մը ձեւացնել կ'ուզէր, կանխահոգութիւնը ունեցած էր նաեւ քովը գտնուած մեծկակ գումարը անգլիական պանքնթօններու վերածելու:

Քաթարինա զբօսանաւը Պրազիլիոյ Պահիա նաւահանգիստը հասնելուն, փոթորկալից ճամբորդութենէ մը ետք, տեղւոյն իշխանութիւնք փութացին չեռս մտնել ու ձերբակալել մեղապարտ ամուր ու իրենց գործակցուհին՝ «Թխադէմ կին»ը, գրաւելով միեւնոյն ժամանակ Կալէի քով գտնուած 200,000 ֆր. գումարը եւ շոգենաւին մէջ գտնուած ամէն ինչ որ փախստական ճամբորդներուն կը պատկանէր. բաց ի սննդեղէնէ, հարիւ-

րաւոր ձեռք հագուստ՝ Կալէի ու իր հոմանուհիին համար գնուած, բարիզեան վերջին նորաձեւութեանց համաձայն:

Այս արկածախնդրութեան վերաբերող վերջին պարագայ մըն ալ յիշենք, որ բոլորովին տարբեր տեսակէտի մը կը վերաբերի ու այս աղտոտութեանց և խաբէսութեանց մէջտեղ՝ պարկեշտ ախպար մը երեւան կը բերէ: Կալէի հարազատ կինը, որ իր զաւկներուն հետ գիւղ կը գտնուէր սւբանէ մը տեղեակ չէր, լրագիրներուն մէջ յանկարծ կարդալով իր էրկանը շահատակութիւնները ու գողութիւնը, փութաց Բարիզ գալ եւ զողահար քայլերով Քօնթուառ տիւքանթ դրամատան Տնօրէնութեան ներկայանալով, ուղեց յանձնել իր էրկանը կողմէ վերջին անգամ իրեն զրկուած 3000 ֆր. գումարը եւ իրեն նուիրած այն բոլոր մատուցները, օղերը, ժամացոյցը և ուրիշ արժեքաւոր առարկաներ զորս հիմայ կը հասկնար թէ գողութեան դրամով գնած էր Կալէ: — «Ես ապրուստի միջոցէ զուրկ կին մըն եմ այս միջոցիս, բայց պարկեշտ եմ, յայտարարեց, և չեմ ուղեր որ ամուսնոյս գողութենէն արատ մը ցայտէ իմ եւ տարաբաղդ զաւկներուն վրայ»: Պանքային Տնօրէնութիւնը շնորհաւորեց այս ճշմարտապէս պատուաւոր կինը իր ազնիւ ընթացքին համար և յանձնարարեց որ այդ դրամը ու առարկաները տանի յանձնէ իր բնակած Թաղին՝ Մօնմարիւրի ոստիկանատունը, ինչ որ սիրայօժար փութաց կատարել Տիկին Կալէ:

### ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած իննամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կաւանդուն բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն, կուսուցութիւն նաեւ թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օգտակար շէնքերը, ինչպէս նաեւ իննամակալութեան երկու բօխիկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը:

## ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

Կ. Պոլիս, Ղալանիս  
1 Սեպտեմբեր 1905

S.

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ թէ Վիթ-  
թորիս ՏԸ ՊԵՐԼԷՆ ապահովագրական ըն-  
կերութեան լիազօր ներկայացուցիչ կար-  
գուած եմ ի Կ. Պոլիս:

Կը յուսամ թէ պիտի հաճիք Ձեր ապա-  
հովագրական գործառնութեանց մէջ առաջ-  
նութիւն տալ այս ընկերութեան որուն պայ-  
մաններն ու սակագիրները գերազանցապէս  
նպաստաւոր են հանրութեան:

Հաճեցէք ընդունիլ, Տ... , յարգանացս  
հաւատարմքը:

Ա. Կ. ԼԻԻՋԷՆԱ

Յ. Գ.—Դեր-գործակալութեան պաշտօն  
վարելու համար՝ լաւ յանձնարարական ու-  
նեցող և գործունեայ անձերու կողմէ ինձ  
ներկայացուելիք առաջարկներուն նպաստա-  
ւոր ընդունելութիւն պիտի ընեմ:

## ՄԵԹԵՐԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Քաղկեդոն—Մոսա

Կը բացուի Սեպտեմբեր 5ին (ըստ Ն. Տ.):  
Այս հաստատութեան նպատակն է ապահովել  
աշակերտներուն բարոյական և մտաւորական  
կրթութիւն մը՝ տոհմային պահանջումներու  
համաձայն: Առ այս, բաց ի Միաբաններէ՝ ո-  
րոնք վարժարանի վարչական մարմինը կը  
կազմեն, ունի մայրաքաղաքիս հայ և օտա-  
րազգի լաւագոյն ուսուցիչներու գործակցու-  
թիւնը, որոնցմով կը կազմուի քսան հոգիէ  
բաղկացած ուսուցչական խումբ մը:

Կ'աւանդէ հայերէն, թուրքերէն, ֆրան-  
սերէն, գերմաներէն, անգլիերէն, լատիներէն  
և իտալերէն լեզուները, յատուկ վաճառա-  
կանական դասընթացք և կրթարանական  
բոլոր ընթացիկ ուսումները, ինչպէս նաև  
գծագրութիւն, նկար, մարմնամարզ, ձայ-  
նական երաժշտութիւն, փողերգութիւն (fan-  
fare) ևլն:

Աշակերտը և հայրական հսկողութիւն մը  
կը տիրէ աշակերտաց բարոյականի և կրթու-  
թեան վրայ: Վարժարանս իր ծովահայեաց

և օգնական բարձր դիրքով՝ Պոլսոյ մէջ ա-  
մենէն հազուագիւտներէն մէկն է, և օժտուած  
է առողջապահիկ կարեւոր միջոցներով, ո-  
րոնց մէջ այս տարի ևս նորութիւններ պիտի  
ներմուծուին:

Վարժարանիս ընթացաւարտները կրնան  
ուղղակի մասնել Եւրոպական Համալսարան-  
ներ. և ստուգիւ անոնց յարմարագոյններուն  
կ'ըլլայ այդ շնորհը՝ Միթարեան վարժա-  
րանաց ինամակալութեան կողմէ, անոնց ա-  
պագան լիուրի ապահովելու համար, ինչ որ  
մեծ առաւելութիւն մ'է Պոլսոյ միւս վար-  
ժարաններուն վրայ:

Վարժարանիս տարեկան զուտ թոշակն է  
Դիչերօթիկներուն համար 25 օսմ. լիրա:  
Աւելի մանրամասնութեանց համար դիմել  
վարժարանիս Տեսչութեան:

Վերատեսուչ Լ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ  
Գաղաթէօյ, Մոսա

## ՎԻԵՆՆԱԿԱՆ

ՄԵԹԵՐԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԱՆԿԱԼԹԻ

49դ արեւելքայն

Վարժարանս կը բացուի 2/15 սեպտ. 1905  
միեւնոյն ուղղութեամբ և ծրագրով:

Վարժարանս ունի արդի երկրորդական  
դպրոցներուն (Ecole secondaire moderne,  
Realschule) ծրագիրը, միջավայրիս պիտո-  
ւիցը յարմարցուած:

Լեզուներ. — Հայերէն, Օսմաներէն, Դեր-  
մաներէն, Գաղղիերէն, Անգլիերէն:

Դիսուքիւներ. — Ուսողական, բնագի-  
տական, բնապատմական, պատմական (կ'ա-  
ւանդուին Գաղղ. և Դերման լեզուներով):

Առեւտրական. — Աշխարհագրութիւն, հաշ-  
ուակալութիւն, թղթակցութիւն (Գաղղիե-  
րէն, Դերմ., Անգլ.):

Ուսուցիչ. — Ներքին և արտաքին 22  
ուսուցիչ կը դասախօսեն:

Նորամուտ աշակերտաց ընդունելութիւնը  
կը սկսի Օգոստ. 17էն, ամէն օր մինչև կէս օր:

Հ. ԳԵՈՐԳ ՎՐԴ. ՓԱՆՉԻԿԵԱՆ

Վարիչ

Վիեննական Միթարեան Վարժարանի

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տէր ԷԼ ՏԵՐԵԿԵ—ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

**ՊԱՐՏԻՋԱԿ**

Վարժարանիս ինչ. տարիքանը կըսեմ սեպտեմբեր 6ին (Ն. Տ) Հաստատու. Թեան Տնօրէն վեր. Ռ. Ջէյմսը եւ իր Տիկինը արդէն վերագործած են իրենց երկամայ քացախաւթենէն եւ լաւալիկայ, առի սեռուցիական խաւթին վրայ, հաւելեան Բաւառացի մէկ ճշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի շրջա նաւարաներ արեւց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ աւելաբան զաւրճութեանը: Աւելորաները ընամենկան խաւթ կը վախեն. գիշերօթիկ սեռուցիներուն. հաստատութեան մասնաւոր բժիշկին հըս. կողմէն են արկին Ջէյմսը ի մայրա կան հոգաւթեան առկ: Գիշերօթիկ աշակերտներուն տարեթուակն է 16 օտ. սակի, 8 օտիկն սեպտեմբերին սկիզբը եւ մնացած 8 օտիկն լուսնուարի վերջերը վճարելի:

Վարժարանս լաւալի սեռուցի մը սէր գործիական երաժշտութեան համար եւ այս դասին տարեկան մասնաւոր վճարումն է 1 սու կէս օտիկ օտմ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Բիթի, Պալպը Հասու, Կ. Պոլիս. կամ Տնօրէնութեան՝ Պարտիճակ: 5—6

**ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՒԼԷՃ ԱՂԶԱՆՅ ՍԿԻՏԱՐ**

Վարժարանիս լաւալիկայ, տարիքանը կըսեմ Սեպտ. 15ին: Գիշերօթիկ աշակերտաւթները կը սպասուին 14ի երեկոյին: Հաստատութիւն մեծ բարւոքում կըսծ է կեդրոնական ջեռուցիչի եւ կապի ներմուծումէն եւ նոր բաղնիքին շինութենէն ի վեր ար մայրաքաղաքին մէջ գտնուածներուն ա մէկէն ընտրին է:

Ըստ արժանւոյն ի նկատ հ'առնուի Հայ դպրոցներու մէջ կատարուած գործը, օրպէս կը ի ներկայացուի այն՝ բերուած վկայական ներով: Գործը եւ արարհարար Հայերէն կ'ուսւցուի խաւթ. վ եւ հաւարեալպէս:

Գուլէճն ղեկի երաժշտութեան զօրաւոր ճիւղ մը, ուր հաւաքուին դաշնակի, եր. գիտնի, ջութակի եւ երգի դասեր: Յառաջիկայ առի մասնաւոր սաղաքութիւն պիտի ըլլայ նաեւ գաղաքութեան եւ նկարչութեան, Դորաճեւ, զգնեալն կ'ուսուցուի ձեւագիտութիւն, մեքենայ գրել, օդագրութիւն եւ առեւտրական թղթակցութիւն:

Աւելի տեղեկութիւն խնդրողներ իրենց նամակները Գուլէճին նախագահին աւղղելու են աւ հասցեով. Dr. Patrick, c/o British Post Office, Constantinople. 6—6

**ԱՏԱՄՆԱԲՈՅԺ**

**Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ**

ՌԵԲԱ, ՄԵՆԵ ՓՈԴՈՅ ԹԻՒՆ 2000

Կալաիա-Մերայի Լիսէին դ'ս  
Գե. Եւ. Շր. օրերը առաւօտեան կաճու  
խեղ մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2  
Բե. Գե. Ուր. օրերը 6եղ մինչեւ 11 1/2  
Կ իրալի օրերը ժամադրութեամբ 3—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ, 1782 ԻՆ  
ԿԵ ՓՈՐՄԻ Ի ՓՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ  
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.  
Իրամագլուխ եւ պահեստի դրամ

• Աճող ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատաւաւորութեամբ եւ փնտուց մէջ իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ մէն տեսակ անշարժ եւ շարժուն ստացուածք, յայտ նպատաւոր պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ  
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յաճ. վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. օտիկ:

Ընդհ. գործակալ Պալպը եւ գաւառաց:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ  
Վերայիս խան, Պանֆ Օրօմանի ֆոյ Ղալաթիա:

Փախ գործակալը ի Պոլիս

ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷՐԷԵԱՆ  
Էմին պէյ խան Ֆնսզեան խան  
Զեքի բոգաբու  
Ա. ԷՆՔԱՆԸՆԵԱՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

## Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍԻՆԿԵՐԻ  
ՄԱՍԿԵՐԻ  
ՊԱԼԱՏԱՆ

- |         |   |                                                    |
|---------|---|----------------------------------------------------|
| ԲԵՐԱ.   | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
|         |   | 2. Մեծ փողոց, Կա լաթա Սէրայի Լիսէին դէմ.           |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.                     |
|         |   | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.              |
| ՊՈԼԻՍ   | } | 1. Սուլթան Համամ, Թ.                               |
|         |   | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿՐԻՍՏՐ |   | Զարչը Պօյու, Թ. 120.                               |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւեստորութիւն։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

9—10

ԿԱՐԱՊԵՏ ԷԺ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ-

մանած գիրքերէն հետեւեալները կը գրառուին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրաքաղաքի միւս հայ գրաւաճառներուն քով.

|                           | հաւսնր | դր. |
|---------------------------|--------|-----|
| Կարմիր մարդաց երգումը     | 2      | 10  |
| Ընտանեկան                 | 2      | 15  |
| Փարիզի ամառնութիւնները    | 1      | 2   |
| Թափառական Հրեայ           | 4      | 50  |
| Արուարձանին աղան          | 3      | 15  |
| Հանրակրթութեան ոճիւրը     | 1      | 5   |
| Սկզբունք Բաղ. Տնտեսութեան | 1      | 4   |
| Ընտանեկան գաղափարներ      | 3      | 15  |

3—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան, Առողջութեան եւ Երկայնակեցութեան։ Բրոք. Պօյու Լէյնըրտէ. Թարգմանեց Անգլիերէնէ, Սոմաէլ Գ. Վարժապետեան։ Կ. Պօյու. Տպագրութիւն, Յ. Մաթէոսեան, 1903։ Հետաքրքրաբար, հրատարակչ, զբոսայի եւ ամէն տեսի ու հասակի լայն գիրքերի գրքայի մը 248 երեսներէ բաղկացեալ։ Թղթակաղմին գինն է 8 դր.։ Լաթակաղմին՝ 10 դր.։ 10է աւելի գնողներու 15 առ հարկը եւ 50է աւելի գնողներու 20 առ հարկը զեղչով վաճառման կէդրեւանդին Պօլիսի գրատունը։

5

# CAISSE PATERNELLE

## ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն մը.  
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն մը.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74%, որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի մէջնէն նշանաւոր դրամաւորներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դրամաւորական ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Ք. ԱՍՏՈՒԱՐԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասաժ Բաթըրճըզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիւր պիտի տրուի այն ֆինիչին որ կարելու արդիւնք մը ի ազդեցութեամբ ըլլայ անձնապէս:

7—10

### ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ բոհափիյի ապրանց

Մեծ-Շուկայ, Քիւրճիկներու դրան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան-Համամ, Միտիլլե Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհափիյի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն ազդեցութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հաւորակութեան:

Ադամ վարդեան մեծապէս գահ թողուցած է իրրազմութիւ յաճախողները:

պէտք է որ Շուկայ ելլող մէջն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

7—10

### ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար փորձներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքանեթու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հիւս եւ նոր գաղտնական բաւերը: Այս վերջին բաւերը՝ ստամոքսի ստամոքսի խոնգարման եւ նարագային մեթեմներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մէջն օր կէս օրէ վերջը: Զարեքլաթի օրերը միայն ճրի: 7—10

# ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

## ՀԵՐՃԱՅԻ



### ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Դոհարեղեկներու, ամեն ճեպակ կան կարասիներու եւ ամենեւն անոանեւ

հազուսներու, եւլն.

Պատիւ անինք ծանուցանել պատաւարածն հասարակութեան թէ՛ մեր վաճառատան ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրելու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ՛ զտա, կիներու եւ տղաներու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՁԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ձերմակեղէններու եւ (թօնափիթ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամպներ, փփրակներ եւ այլն.) նախ մթերոնաց մը հառապած ենք. խիտ զիւրաքանչեւի գիններով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին զիմե վերայիչեալ վաճառատուները, ուրկէ անառարակօյն անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

### ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:
3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց տե՛լուս մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կառնուին: Իսկ ապառիկ ծախուած եւ անվճար մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կառնուին:

### ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարափական վճարմանց համար հաւարիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՒՆ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



## ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՇՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկող արտօնուած

Կեդրոնատեղին Բեռլինապուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴԵՐՈՒ, ՍՄԵՆ ՏԵՍԱՅ ԱՐԿԱՇՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՅՈՒՄՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՒՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՇՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառնուին զէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800

Ամէն տեսակ տեղեկութեանց համար զիմե Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

խան, Վոյվոտա, Ղաւաթիւ,